600.0323.08.08.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 օգոստոսի 2018 թվականի №323Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի №326Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի հուլիսի 18-ին «ԿԱՐԱՊ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 2 տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 6-ի №326Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Բազում» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0556 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Ընկերության դիմումին կից ներկայացված «Բազում» փոքր հիդրոէլեկտրակայանում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկանքի՝ կայանում որևէ աշխատանք չի իրականացվել,

գ) Ընկերությունը 4-րդ անգամ է կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ ներկայացնում Հանձնաժողով,

դ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և

պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Քսաներկու ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 6-ի «ԿԱՐԱՊ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Բազում» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №326Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0556 լիցենզիայով ամրագրված «Բազում» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի օգոստոսի 11-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի հունիսի 11-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0556 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Բազում» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի սեպտեմբերի 26-ի №652-7767 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №ՀԲԵՆ16/129-10 երաշխիքի համաձայն երաշխավորված մեկ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար դրամ գումարից վեց հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել մեկ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2020 թվականի հուլիսի 26-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի օգոստոսի 11-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԵՂԱԿԱԼ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
8 օգոստոսի 2018թ.